Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՆԸ ԲԻՔՖԱՅԱՅՈՒՄ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության գահակալ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի հովանավորությամբ Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը, որ միևնույն ժամանակ ուխտի օրն է Բիքֆայայի Ս. Աստվածածին մատրան, այս տարի ևս տոնախմբվեց մեծ շուքով:

2000 թ. օգոստոսի 12-ին, ուրբաթ օրը, առավոտյան, հավատացյալ ուխտավորների հոծ բազմություն էր հավաքվել Ս. Աստվածածին մատրան շրջափակում, որտեղ ժամը 10.00-ին հատուկ աղոթքներով և շարականների երգեցողությամբ տեղի ունեցավ աղի օրհնություն և ոչխարների զենում:

Աղոթքի պահին

Ժամը 9.00-ին Դպրեվանքի շրջափակում, միաբան Հայրերի և հայորդիների հոծ բազմության ներկայությամբ, ելույթ ունեցավ Համազգայինի «Քնար» պարախումբը և ներկայացրեց հայկական պարերի ընտիր մի փունջ: Անի Եփրեմյանն ասմունքեց «Աղոթք» և «Սասնա պար» քերթվածները:

Այնուհետև բացման խոսք ասաց Տ. Մեղրիկ վրդ. Բարիքյանը, որը շեշտեց հայկական պարի յուրահատկությունները՝ բնութագրելով նրա ազգային դիմագիծը:

Օգոստոսի 13-ին, շաբաթ օրը, ողջ օրվա ընթացքում տեղի ունեցան Գիշերային, Առավոտյան, Ճաշու և Երեկոյան ժամերգություններ, իսկ գիշերը մատուցվեց Սուրբ

և անմահ Պատարագ: Պատարագեց և քարոզեց Ս. Էջմիածնի միաբան, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, որը Լիբանանում էր գտնվում Արամ Ա Կաթողիկոսի հատուկ հրավերով: Պատարագի երգեցողությունը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը՝ ղեկավարությամբ Տ. Մեղրիկ վրդ. Բարիքյանի:

Պատարագիչ Սրբազանն իր քարոզի մեջ վեր հանեց օրվա խորհուրդը և շեշտեց մայրության գաղափարը Աստվածածնի կերպարում: Քարոզի ավարտին Սրբազան Հայրը փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնները և շնորհակալություն հայտնեց Արամ Ա Կաթողիկոսին՝ իրեն ընծայված այս անմոռաց առիթի համար:

Պատարագի ավարտին Արամ Ա Վեհափառ Հայրապետը, շրջապատված միաբան Հայրերով, կատարեց մատաղի և խաղողի օրհնություն, հավատացյալ ժողովրդին տվեց իր պատգամը, ներկայացրեց ճշմարիտ ուխտավորի տիպարը՝ շեշտելով, որ նա պետք է հավատքով ու սիրով լեցուն քրիստոնյա լինի: Վեհափառ Հայրապետն իր խոսքն ուղղելով մայրերին՝ թելադրեց, որ նրանք Աստվածամայրն ունենան որպես կյանքի ուղենիշ, ապրեն ինչպես Աստվածամայրը՝ լցված հավատքով, սիրով ու զոհողությամբ:

Նորին Սրբությունն իր խոսքն ուղղեց նաև Նաթան Սրբազանին, որը ոչ միայն ողջույններ էր բերել Մայր Հայաստանից ու Ս. Էջմիածնից, այլև իր հետ բերել էր հայրենի հողի վրա աճած ու հայրենի հողից ավիշ ստացած խաղող: Նորին Սրբությունը Նաթան Սրբազանի միջոցով իր եղբայրական ողջույնները հղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին:

Օգոստոսի 15-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, Բիքֆայայի Ս. Աստվածածին մատրան մեջ մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ և տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն՝ հայ ժողովրդի բոլոր ննջեցյալների և մանավանդ մատրան բարերարներ տեր և տիկին Երվանդ և Ալիս Տեմիրճյանների հոգիների խաղաղության համար: Հոգեհանգստյան արարողությանը նախագահեց Արամ Ա Կաթողիկոսը: